
ԱԳՈՒԼԻՍԻ ԵՂԵՌՆԻ ԽՈՍՈՒՆ ՎԱՎԵՐԱԳԻՐԸ

Մեծանուն հայագետ Հրայր Աճառյանն իր «Քննություն Ագուլիսի բարբառի» ձեռագիր ուսումնասիրության (1935) բարբառային նմուշների բաժնում գետեղել է Ագուլիսի բարբառով (գոկերենով) գրված մի բանաստեղծություն՝ հետևյալ մակագրությամբ. «Սույն ոտանաւորը գրուած է հայ-թրքական ընդհարումների տպաւորութեան տակ: Թէն պարունակում է որոշ ազգայնական մտայնութիւն, բայց բարբառի համար շատ բնորոշ լինելով՝ աւելորդ չենք համարում արտատպել այստեղ»¹:

Այդ օրերին ընդամենը մեկուկես տասնամյակ էր անցել Ագուլիսի հրեշավոր եղեռնից, երբ 1919 թ. դեկտեմբերի 24–25-ին օսմանյան զորքը և ադրբեջանցի խաժամուժը հիմնահատակ ավերեցին ու հրո ճարակ դարձրին Գողթնի հիասքանչ ոստանը՝ հայ մշակույթի նշանավոր կենտրոն Ագուլիսը², և «ազգայնականի» վտանգավոր պիտակից երկյուղած ականավոր լեզվաբանը, բնականաբար, խիստ զգուշավորությամբ է տեղադրել Հարություն Թումանյանի «Միտ հրճ'անդանձ վա՛ թ'անը» («Մեր հոգեդարձ հայրենիքը») վերնագրով սրտառու բանաստեղծությունը իր նշանավոր բարբառագիտական աշխատանքներից մեկում³:

Ժամանակի ճանաչված գրող և մտավորական Հարություն Թումանյանը ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի ոչ միայն ազգանվանակիցն ու գրչակիցն է եղել, այլև հասակակիցը. ծնվել է նույն՝ 1869 թվականին, Գողթն գավառի Ագուլիս ավանում, որպես ուսուցիչ աշխատել և ստեղծագործել է Թիֆլիսում:

Հարություն Թումանյանն այնքան ճանաչված է եղել, որ նրա անուն-ազգանվան կրճատ տարբերակը Թիֆլիսի պարբերականներում և հրատարակված գրքերում տպագրվել է «Յար. Թումա-

¹ Հ. Աճառեան. Քննություն Ագուլիսի բարբառի, Երևան, 1935 (ապակետիպ), էջ 309:

² Հ. Հախնազարեան. Գողթան գաւառ.– Ագուլիսի և շրջակայ գիւղերի եղեռնը, Թեհրան, 1991, էջ 313–377:

³ Հ. Աճառեան. նշվ. աշխ., էջ 309–310:

նեան” ձևով, իսկ Հովհաննես Թումանյանինը՝ “Յուլի. Թումանեան”:

Հար. Թումանյանը ստեղծագործել է նաև իր մայրենի բարբառով: Ազուլիսի բարբառը կամ գոկերենը՝ ըստ ավանդական միահատկանիշ դասակարգման պատկանում է հայերենի բարբառների “ու” ճյուղին, ըստ Գևորգ Ջահուկյանի մշակած բազմահատկանիշ վիճակագրական դասակարգման՝ հայերենի բարբառների արևելյան խմբակցության արևելյան (Ազուլիս-Մեղրու) բարբառախմբին⁴, հայոց լեզվի ամենատանձնահատուկ բարբառներից է: Հնչյունական համակարգը մոտ է գրաբարի հնչյունական համակարգին, ունի քմային ձայնավորներ (ւ, օ, ու,) և քմային բաղաձայններ (գ՛, կ՛, ք՛): Առաջին տպավորությամբ խիստ անհասկանալի լինելը հետևանք է բարբառում ձայնավորների կրած գրեթե անճանաչելի փոփոխությունների (ահ-օհ, համ-հում, բամբակ-բիմբակ, թանկ-թունգ, մարդ-մօռդ, ուրագ-օրագ), պարզ ձայնավորների դիմաց երկրարբառների առկայության (սիրել-սայրիլ, ինը-այնը, սպիտակ-սպայտակ, քիթ-քայնթ, ազի-օյզի, ճրագ-ճրօյգ, ասեղ-այսւղ, առնէտ-ըոնայտ), բայի խոնարհման առանձնահատկությունների (գնում էի-նսիսլ ըմ նել, գալիս ենք, գալիս եք-գ՛ուլ ըք, ասացի-ահալ ըմ, ահամ) և այլն: Այս բարբառով խոսել են Գողթն գավառի Վերին Ազուլիս ավանում, Ներքին Ազուլիս, Յոնա, Տանակերտ, Քաղաքիկ, Հանդամեջ, Դիսար գյուղերում⁵: Հինավուրց այս բարբառը վերջնականապես մարեց 1988 թ., երբ ադրբեջանցի ելուզակները Յոնա գյուղից արտաքսեցին վերջին մի քանի տասնյակ հայ բնակիչներին⁶:

Հար. Թումանյանը հրապարակվող բանաստեղծությունը գրել է Ազուլիսի մեծ ողբերգությունից ամիսներ առաջ՝ հավանաբար կանխազգալով բարդ և հակասական իրադարձություններով լի այդ ժամանակներում հայրենի եզերքի մոտալուստ կորուստը: Այն առաջին անգամ հրապարակվել է 1919 թ.՝ “Զօկի ճրօյգ” պարբե-

⁴ Գ. Ջահուկյան. Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972, էջ 136:

⁵ Ս. Սարգսեանց. Ազուլեցոց բարբառը (գոկերի լեզուն), Մոսկվա, 1883:

⁶ Ա. Վարդանյան. Արմատներ. – Ինչպես հայաթափվեց Նախիջևանը, Երևան, 2006, էջ 94–98:

րականում՝ և, ցավոք, այսօր էլ առավել քան արդիական է, քանզի պատմական դաժան ճակատագրի բերումով արդեն հիմնովին հայաթափված և ամայացած Հայոց նվիրական Գողթն գավառի հիասքանչ մարգարիտ Ագուլիսն արդեն գրեթե մեկ դար երկու խղճուկ աղբբեջանաբնակ գյուղի է վերածված...

Ստեղծագործությունը ներկայացնում ենք գիտական տառադարձությամբ բարբառային բնօրինակով և մեր կողմից կատարված գրական հայերեն փոխադրությամբ:

ԱՐՏԱԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Թումանաց Հարըթյուն

Միր հրգանդանձ վանթանը

Օհի մաջին, մօհի մաջին
Միր վանթանը լէլիս ս,
Ուման չիկօ՝ ք՞ման՞ արի,
Սէվ խրբերը գէլիսս:

Շօռ ա տրվէժ, մալլափ ծրովէժ
Միր ըշխարքի ուլլուրը.
Հարամիք ըն ակած լըցվէժ
Միր ազգի չուրք բուլլուրը:

Ըկրնլու սի, մըշտըլըղի,
Թօզա կ'անքի գաւրունքին
Սէվ մըռօջ ա, թօխայ ա ակած
Կէտված Հայօց յէրկրնքին:

Դու շմունն ակած, չափմիշ նարամ,
Միր օջաղը քանդան ս,
Հայի ճըրօգը հրնգըցանսմ,
Աշխարք ըրնօվ նսրկսմ ս:

Միգ կ'անք տրվուղ, միգ շունչ տրվուղ
Զօկրստունը մաննսմ ս,

⁷ «Զօկի ճրօյգ» (Թիֆլիս), 3. IV. 1919:

*Նօ՞ր ըք, նօ՞ր ըք, քյսմբախտ զօկար,
Շու՛ւ տ հրսահիք, մաննամ մի:*

Հարություն Թումանյան

Մեր հոգեդարձ հայրենիքը

*Ահերի մեջ, մահերի մեջ
Մեր հայրենիքն է լալիս,
Չկա մեկը, որ ձեռք մեկնի,
Սև լուրեր են մեզ գալիս:*

*Շուտ է եկել, իսպառ ծովել
Մեր աշխարհի ոլորքը.
Թշնամին է եկել լցվել
Մեր ազգի չորս բոլորը:*

*Աչքալույսի, ավետիսի,
Նորոգ կյանքի գարունքին
Սև մշուշ է, թուխպ է եկել
Դիզվել Հայոց երկնքին:*

*Ոստին եկել, մեզ թալանում,
Մեր օջախն է ավերում,
Հայի ճրագն է հանգցնում,
Հողն արյունով է ներկում:*

*Մեզ կյանք սվոդ, մեզ շունչ սվոդ
Ջոկատանը մեռնում է,
Ո՞ւր էք, ո՞ւր էք դժբախտ զոկեր,
Շուտ հասեք դուք, մեռնում է:*